

ԱՊՐԻԼ 2022

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	6
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	9
1.5. Էներգահամակարգ	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ	10
2. Առևտրային տնօրինություն	11
2.1. Բաժանորդների տվյալներ	12
2.2. Հասույթ	12
2.3. Գանձում	13
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	14
2.5. Ջրաչափեր	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	16
3. Տեխնիկական տնօրինություն	17
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	19
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	21
3.4. Ջրատար համակարգի բարելավում	22
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	25
3.6. 1-85 թեժ գիծ	28
4. Լրատվական ծառայություն	29
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	32
5.1. Փաստաթղթերի մշակում	33
5.2. Դասընթացներ/սեմինարներ	33
5.3. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	35
5.4. ԱՎՕ-ների և վկայագրերի փորձաքննության աշխատանքներ ..	35
6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	36
6.1. Համակարգչային ցանց	37
6.2. Բնտերակտիվ համակարգ	37

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

Քաղաք Երևան

«Կենտրոն» տեղամաս

● «Էրեբունի» վարչական շրջանի տարածքում գտնվող Չերնիշևսկու փողոցի ջրամատակարարումը իրականացվում է $d=100$ մմ պողպատե ջրագծով, որի $L=200$ զծ/մ երկարությամբ հատվածը գտնվում էր խիստ քայքայված վիճակում և հաճախակի էին կրկնվող վթարները: Ջրագծի որոշակի հատվածում անհնարին է դարձել վթարավերականգնողական աշխատանքները և հետագա շահագործումը: «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից $d=100$ մմ $L=200$ զծ/մ հատվածը փոխարինվել է $d=110$ մմ $L=150$ զծ/մ և $d=63$ մմ $L=50$ զծ/մ պոլիէթիլենային խողովակներով: Տեղադրվել է թվով 32 ջրաչափական դիտահոր, փոխարինվել և սահմանազատման կետ են տեղափոխվել թվով 44 ջրաչափ: Վերակառուցվել է փականային հանգույցի դիտահորը և տեղադրվել են $D=100$ մմ ճնշման կարգավորիչ փական և փական:

Իրականացված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $d=100$ մմ պողպատե քայքայված ջրագծի $L=200$ զծ/մ երկարությամբ հատվածը, բարելավվել է ջրի որակը, վերացել են ջրակորուստները, բացառվել են հնարավոր ապօրինի ջրամիացումները:



● Սրբարատի մարզի Ջրաշեն և Դիտակ համայնքների ջրամատակարարումը իրականացվում էր $D=80-100$ մմ մետաղական և $d=110$ մմ պոլիէթիլենային խողովակներով: Դիտակ համայնքը սնող $d=110$ մմ պոլիէթիլենային ջրագիծը անցնում էր սեփական տնատիրությունների տարածքներով, ինչը իր հերթին դժվարացնում էր վթարների վերացումը և ջրագծի շահագործումը:

«Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից երկու համայնքները սնող ջրագծերը շահագործումից հանվել են և կառուցվել է $d=160$ մմ $L=450$ զծ/մ երկարությամբ նոր պոլիէթիլենային ջրագիծ: Փոխարինվել է Դիտակ համայնքը սնող $d=110$ մմ ջրագիծը $L=450$ զծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով: Բաժանարար հանգույցում կառուցվել է դիտահոր և տեղադրվել է 2 $d=100$ մմ փական և $d=100$ մմ ճնշման կարգավորիչ փական:

Իրականացված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $d=80$ մմ- 160 մմ քայքայված մետաղական և $d=110$ մմ պոլիէթիլենային ջրագիծ, որի ընդհանուր երկարությունը կազմում է $L=2350$ զծ/մ: Բարելավվել է թվով 595 բնակիչ-բաժանորդների ջրամատակարարումը, խնայվել է մոտ 5լ/վրկ ջրաքանակ:



Ապրիլ ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2065
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	65980
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	57160
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	19440
Ջրաչափական հանգույնցներ ուսուճաստիություն, սխեմաների կազմում	հատ	254
Շահագործումից հանված ջրագիծ	մ	2500
Կառուցված ջրագիծ	մ	4400.7
Կառուցված կոյուղագիծ	մ	783
Վերացված գաղտնի վթարներ	հատ	26
Փոխարինված փական	հատ	103
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	432
Մաքրված դիտահոր	հատ	659
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	16.6
Վերացված վթարներ		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1589
Ջրահեռացման ցանցում	հատ	2760
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Ապրիլ ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	836	1039	558

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է ապրիլ ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	241	14	1	3	1	0	0	0	0	260
Փոխարինված	311	14	6	2	3	0	0	0	1	337
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	113	17	2	1	1	2	0	0	0	136
Ընդամենը	665	45	9	6	5	2	0	0	1	733

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100մմ տրամաչափի 733 ջրաչափ: Կատարված աշխատանքների 91 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Քաղաք Երևան

● Նոր Նորք 2-րդ գանգված, Մուղովական փողոց 12 հասցեում վթարային վիճակում գտնվող $d=150$ մմ $L=31$ զճ/մ երկարությամբ թուջե կոյուղագիծը «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է $d=150$ մմ պոլիէթիլենային երկշերտ ծալքավոր խողովակով:



Մարզ Սյունիք, Քաղաք Սիսիան


● Շահումյան փողոցով անցնող $d=250$ մմ կոյուղագիծը երկար տարիներ գտնվում էր խցանված վիճակում: Կեղտաջրերը ամբողջությամբ դուրս էին գալիս բնակելի տարածքներ, ստեղծելով հակասանիտարական իրավիճակ: «Սիսիան» տեղամասի աշխատակիցների կողմից ազբոցեմենտե կոյուղագիծը փոխարինվել է $d=200$ մմ $L=80$ զճ/մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով, վերակառուցվել է թվով 7 կոյուղու դիտահոր, տեղադրվել են երկաթբետոնե ծածկեր: Իրականացված աշխատանքների արդյունքում կոյուղագիծը գործում է անխափան:

ազբոցեմենտե



Մարզ Վայոց Ձոր, համայնք Եղեգնաձոր

● Համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Շահումյան փողոցի կոյուղագիծը խցանված էր, տեղ-տեղ կոտրված էր և անհնարին էր դարձել վերջինիս շահագործումը: «Եղեգնաձոր» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է $d=200$ մմ $L=150$ զճ/մ երկարությամբ պոլիէթիլենային երկշերտ ծալքավոր կոյուղագիծ, վերանորոգվել է թվով 3 կոյուղու դիտահոր, տեղադրվել է $d=1000$ մմ կոյուղու նոր դիտահոր: Իրականացված աշխատանքների արդյունքում բարելավվել է համայնքի Շահումյան փողոցի ջրահեռացումը:



Ապրիլ ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Գոյուղագծերի լվացում	Գոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Գոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1270	278	12
2	Մաշտոց	2000	253	34
3	Շահումյան	1225	187	285
4	Ջեյթուն	515	328	0
5	Շիրակ	1175	508	16
6	Արթիկ	120	107	0
7	Ապարան	0	38	0
8	Ալավերդի	2200	31	40
9	Աշոցք	0	6	2
10	Բերդ	0	12	0
11	Իջևան	200	40	0
12	Լոռի	4230	230	0
13	Նոյեմբերյան	40	21	0
14	Սպիտակ	300	21	0
15	Ստեփանավան	780	35	0
16	Թալին	0	8	12
17	Տաշիր	240	8	0
18	Չարենցավան	330	82	12
19	Արմավյան	2180	83	0
20	Հրազդան	2000	133	6
21	Կենտրոն	340	263	12
22	Հյուսիս	0	199	37
23	Հարավ	0	287	3
24	Էրեբունի	00	156	6
25	Արմավիր	0	110	0
26	Արտաշատ	0	91	0
27	Էջմիածին	0	119	42
28	Աշտարակ	0	32	0
29	Արարատ	0	106	0
30	Մասիս	0	61	14
31	Գավառ	50	6	0
32	Սևան	400	81	6
33	Մարտունի	0	21	0
34	Վարդենիս	430	14	0
35	Ճամբարակ	0	15	0
36	Դիլիջան	40	57	0
37	Վայք	50	11	0
38	Եղեգնաձոր	220	28	140
39	Ջերմուկ	115	39	0
40	Սիսիան	320	43	80
41	Գորիս	0	41	6
42	Կապան	1127	78	104
43	Մեղրի	340	32	0
	Ընդամենը	22237	4299	869

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ.սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Ջերմուկի կեղտաջրերի պոմպակայանում կատարվեց սարքավորումների ընդհանուր զննում և սպասարկում: Փոխարինվեց պոմպերի յուղերը, ստուգվեց պոմպերի հերմետիկությունը, ստուգվեցին և կարգաբերվեցին բոլոր էլեկտրական սարքավորումները և այժմ պոմպակայանը աշխատում է անխափան:

- Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանի կոյուղու պոմպերից մեկը խցանվել էր և ջուր չէր մղում, որն էլ դուրս բերվեց հորից և մաքրվեց: Շարքից դուրս էր եկել նաև հակադարձ փականը, որն էլ փոխարինվեց նորով և այժմ պոմպակայանն աշխատում է անխափան:

- Երևանի կեղտաջրերի մաքրման կայանում աղբի կոնտեյնների տեղադրման հատվածում հատակը քանդվել էր և առաջացել էին մեծ փոսեր, որի արդյունքում կոնտեյնների դուրս բերելը և տեղադրելը կատարվում էր մեծ դժվարությամբ: Արդյունքում հատակը բետոնացվեց և պատվեց թիթեղով:

- Մարտունու կեղտաջրերի մաքրման կայանում մանր ճաղավանդակի քերիչ սանրը տեղից խախտվել էր, որի պատճառով մեծ քանակությամբ աղբ էր հավաքվել ճաղավանդակին: Արդյունքում քերիչ սանրը կարգաբերվեց և այժմ մաքրման կայանը աշխատում է բնականոն ընթացքով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	66,961	30.6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	56,060	16.2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	170,912	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	83,140	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	127,103	19.8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	16,963	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	10,938	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	16,200	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	26,430	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	137
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	9
Այց	1
Պոմպի ապամոնտաժում	1
Պոմպի տեղադրում	1

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Ապրիլ ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար ապրիլ ամսվա ընթացքում նորոգվել են թվով 4 մեքենայի շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 11 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 8 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 11 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Փոխարինվել են թվով 58 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ և քսայուղեր:



Թվով 22 անվադող նորոգվել է, փոխարինվել և հավասարակշռվել են:

Թվով 10 մեքենայի մարտկոց փոխարինվել է նորերով:

Թվով 9 մեքենա-մեխանիզմների համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ: Վերանորոգվել են թվով 9 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուխ լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 5 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 4 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 4 մեքենայի վրա, փոխարինվել է կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 6 մեքենայի վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Նորոգվել է թվով 6 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.05.2022թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 576,982 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2022թ. ապրիլ ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	669,899	551,037	82,3
	Իրավաբանական անձ	30,486	25,945	85,1

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	734,147	551,575	75,1
	Իրավաբանական անձ	35,885	25,298	70,5

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 544 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Ապրիլ ամսվա ընթացքում ստուգաչափվել է 3712 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 04.2022
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1554	1747	223	3524
	Իրավաբանական անձ	68	110	10	188
	Ընդամենը	1622	1857	233	3712

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ ապրիլ ամսին փոխարինված 3712 ջրաչափերի մոտ 56%-ը (կամ 2090 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 120,812 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2022թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Ապրիլ ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 1,999 մլն. դրամ (97 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում նախկինում կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում,

ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը մարտ ամսին գերծ է մնացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ SMS-հաղորդագրությունների):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Ապրիլ ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 383 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 40.1 մլն դրամ ընդհանուր գումարով:


Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում է դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Տնօրինություն	Պարտքը 01.05.2022թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում նոյեմբեր ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	8,907	2,220
Բնակիչ-բաժանորդներ	6,540	1,479
Իրավաբանական անձեր	2,367	741

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում շուրջ 317.0 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2022 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱՀԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.05.2022թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	701,828	550,061	78.38	34,785	25,289	72.7
	Առանց ջրաչափի	32,319	1,514	4.68	1,100	9	0.82

Տվյալների բազայում 01.05.2022թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	873,433	401,490	45.97	38,604	11,241	29.12

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4987 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 728 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2380	1955	81.9
գ.Պոռոշյան	1615	1090	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջանի թաղ.	5918	1869	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Միսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 10890, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 10857, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1644, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2333, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1522, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2486 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4267 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախների և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	332	172,845	31,926,801

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի ապրիլ ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 97.1%, ինչը 0.5% ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Զրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 90 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված են կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2022թ-ի ապրիլ ամսին, 2021թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 126 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 132 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 15939 ԿՎտ.ժ (3.43%) այն դեպքում, երբ նորակառույց շենքերի յոթ պամպակայան ավելացել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 7 պամպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 6737ԿՎտ.ժ: Իսկ առանց այս պամպակայանների էլ. էներգիայի ծախսի, այն կնվազեր 22676 ԿՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց խարբերողի պոմպակայանի)





Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ուսումնասիրված հասցեներ


Հաշվետու ժամանակահատվածում 36 հասցեներում կատարվել են էլ. հաշվիչի ընթերցման, ցուցմունքների գույքագրման և պոմպակայանի զննման աշխատանքներ: Ուսումնասիրության արդյունքում 1 հասցեում հայտնաբերվել է ապօրինի լարանցում: Կազմված արձանագրության հիման վրա վերականգնվել է Հնկերոյանը պատճառված 1140,48 կՎտ.ժ-ին համարժեք 57191 դրամի գսաար: Մերաստիա 23, 23ա պոմպակայանում կատարվել է ճնշման ռելենների աշխատանքի կարգաբերում:

«ՀԷՑ» ՓԲԸ-ից ձեռք է բերվել 70 սահմանազատման ակտ:



● Գյումրի քաղաքում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 9967 կՎտ.ժամ 28.3%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Պումպակայանների ուսումնասիրություն

Թվով 28 խոշոր պումպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 13 պումպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 376 բակային պումպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 253 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ:

Ինվերտորների տեղադրում


Հաշվետու ամսում ութ հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով.

- Ն. Դուման 1 (Ar-143)
- Ավետիսյան 67 (Ar-106)
- Նորապատ խ/հ (N.Ak-19)
- Ուլնեցի 51 (Qz-25)
- Կումիտաս 49/4 (Ar-44)
- Շինարարների 6/1 (Ma-73)
- Հակոբյան 9 (Ar-139)

Թվով երկու հասցեում նախկին մաշված պոմպերի և ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերի փոխարեն տեղադրվել են նոր ինվերտորային պոմպեր.

- Արաբկիր 21փ (Ar-41)
- Մեքաստի 24 (Sh-8)

Տեղադրված գումարային 116 ինվերտորային պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 8,417կՎտ.ժ կամ 11.87%:




Խոշոր պումպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 20 խոշոր պումպակայաններում էլ.մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● 2022 թվականի ապրիլ ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պումպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 203 620 ԿՎտ/ժամ (18,16%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պումպակայանների սպառած էլ. էներգիա



● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 28 941 ԳՎտ.ժ/ամիս կամ 1,57% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 310 907 ԳՎտ.ժ կամ 7,86 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են ապրիլ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Կատարվել է գյուղերի և քաղաքների ամբողջական տվյալների բազաների ստեղծում, թարմացում և կապվող ջրատար համակարգերի թարմացում, միավորում	գյուղեր	21
Բերքառատ, Սաղունց, Գեղաղիթ համայնքների ջրամատակարարման բաշխիչ ցանցի տվյալների մուտքագրում՝ ըստ Գոտիավորման բաժնի տվյալների	համայնք	3
Արշալույս գյուղի ջրամատակարարման բաշխիչ ցանցի տվյալների մուտքագրում՝ ըստ տեխնիկական պայմանների տվյալների	գյուղ	1
Մարզերի և համայնքների ջրամատակարարման բաշխիչ ցանցի տվյալների փոփոխում, մուտքագրում՝ ըստ տեղամասերից բերված տվյալների	Մարզեր և համայնքներ	10
Զովունի, Լուկաշին, Քանաքեռավան, Սաղմոսավան գյուղերի, Երևանի Արաբկիր սպասարկման տեղամասի ջրամատակարարման համակարգերի ճշգրտում	Գյուղ, քաղաք	5
Նուռնուս համայնքի ջրագծերի և դրան կից օբյեկտների թվայնացում	համայնք	1
Կատարվել է կատարողական գծագրերի (ՊԿԱԾ) անցկացում ԱՏ համակարգ	Համայնքներ, գյուղեր	3
Երևան քաղաքի տարբեր համայնքների (Արաբկիր, Մաշտոց, Ջեյթուն) և շրջակա գյուղերի (Լուկաշին, Ն. Խարբերդ, Բարձրաշեն, Ջրամբար) ջրագծերի թարմացումներ	Համայնքներ, գյուղեր	7

Ղազարավան-Էջմիածին ջրատար

Ջրատարի շրջայցի ժամանակ հայտնաբերվել են վթարներ Դաշտ գյուղի տարածքում գումարային 5լ/վ ծավալով: Դրանց մասին տեղեկացվել է տեղամասին:



Գոտիավորման վարչություն


Քաղաք Գյումրի

● «Շիրակ» տեղամասի հետ ուսումնասիրվել է Հացիկ համայնքը սնուցող ջրագիծը: Պատճառը գյուղի դպրոցում և հարակից տներում ջրի ճնշման անկումն էր: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ սնուցող ջրագծի վրա առկա է խնդիր: Կատարվել է սնուցող ջրագծի շրջանցում D=90մմ ՊԷ L=20մ ջրագծի միջոցով: Արդյունքում ապահովվել է կայուն ջրամատակարարում խնդրահարույց հասցեներում:




Քաղաք Սևան

● Սևան քաղաքում իրականացված վթարադրոնողական աշխատանքների արդյունքում Սևան-Երևան մայրուղու մոտակայքում՝ Սևան քաղաքի հին հիվանդանոցի ջրաչափական հանգույցի մոտ հայտնաբերվել է 5լ/վ քանակությամբ վթար:



Քաղաք Հրազդան

● Փյունիկ և Արտավազ գյուղերում իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են 3 վթար՝ ընդհանուր 7 լ/վ ջրաքանակով:




Քաղաք Մարտունի

- Մարտունի քաղաքում կատարված աշխատանքների արդյունքում տնտեսվել է շուրջ 10լ/վ ջուր:

Քաղաք Երևան

● «Մաշտոց» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Մարգարյան փողոցի «Կախիզեր» սուպերմարկետի կայանատեղիով անցնող $D=200$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 7$ լ/վ ջրաքանակ:



● «Մաշտոց» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է վթար գյուղ Մերձավանի գորմասերը անուցող $D=100$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 10$ լ/վ ջրաքանակ:



● «Զեյթուն» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Վարշավյան փողոց 8 տան մոտով անցնող $D=50$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=7$ լ/վ ջրաքանակ:



● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Շիրակի 41 հասցեի մոտով անցնող $D=100$ մմ պողպատե ջրագծի վրա: Ներարկման միջոցով փոխարինվել է $L=35$ մ հատված՝ արդյունքում տնտեսելով $Q = 3$ լ/վ ջրաքանակ:





● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ Կողբի փողոց 2-րդ նրբանցք 23 հասցեում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է հին, վթարված $D=50$ մմ պողպատե ջրագիծ: Նշված ջրագիծը միացման կետից խցափակվել է արդյունքում տնտեսելով $Q = 1,5$ լ/վ ջրաքանակ:





● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ Չեխովի 23 հասցեում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է հին, վթարված $D=80$ մմ պողպատե ջրագիծ: Նշված ջրագիծը միացման կետից խցափակվել է արդյունքում տնտեսելով $Q=1,0$ լ/վ ջրաքանակ:

● Հյուսիս տեղամասի հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Նորքի 1-ին զանգվածի Նանսեն 7-րդ շենքի հարևանությամբ: Միացման կետից խցափակվել է վթարված, անհայտ միացում $D=25$ մմ տրամագծով: Արդյունքում տնտեսվել է $Q=0.5$ լ/վ ջրաքանակ:



● «Հյուսիս» տեղամասի հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Նորքի 1-ին զանգվածի Նանսեն 20-րդ շենքի հարևանությամբ: Միացման կետից խցափակվել է վթարված, անհայտ միացում $D=25$ մմ տրամագծով և $D=150$ մմ ջրագծի վրա անցքի փակում: Արդյունքում տնտեսվել է ընդհանուր $Q=1.5$ լ/վ ջրաքանակ:

3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● **Քաղաք Իջևանի** «Ազատամուտ» քլորակայանում շարքից դուրս եկած 17/7 լ/ժ արտադրողականությամբ դոզավորման պոմպը վերանորոգվել է և Easiflow սարքավորումը փոխարինվել է նորով, ինչի շնորհիվ ապահովվել է հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքը:



● **Քաղաք Չարենցավանի** «Ալափարս» քլորակայանում հիմնովին վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի քլորաջրի գծերը նոր 0.5կգ/ժ արտադրողականությամբ ինժեկտորի տեղադրմամբ՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանք ապահովելու նպատակով:



● **Քաղաք Գառնիի «Գառնի»** քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը ապահովելու նպատակով վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի քլորակայան մտնող հուն ջրի փասաված խողովակը:



● Քաղաք Գառնիի «Օգոնակայան» քլորակայանում հեղուկ քլորը ջրին ավելի դյուրին խառնվելու նպատակով քլորակայանի քլորաջրի շարքից դուրս եկած խողովակները փոխարինվել են, ՕԿՁ քլորաջրի մուտքի խողովակը երկարացվել է:



● **Քաղաք Աշտարակի «Ղազարավան»** քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի սարքավորումներին ինժեկցիան ապահովող խափանված պոմպը փոխարինվել է նորով:



● **Քաղաք Ստեփանավանի «Նովոսելցովո»** քլորակայանում հեղուկ քլորի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով քլորի համակարգի խափանված դրզատորը վերանորոգվել է տեղում, շարքից դուրս եկած վակուում կարգավորիչը փոխարինվել է նոր վերանորոգված վակուում կարգավորիչով:



● **Քաղաք Չարենցավանի «Ֆանտան»** քլորակայանում վերանորոգվել են քլորակայանի քլորագծերը սարքավորման անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● **Քաղաք Եղեգնաձորի** «Քառասուն Աղբյուր» քլորակայանում սարքավորման անխափան աշխատանքն ապահովելու, քլորացման համակարգի ինժեկտորի աշխատանքն ապահովելու համար տեղադրվել է ջրի պոմպ, մոնտաժվել է քլորագծի խողովակները:



«Զվար» ՋՄԿ-ում ջրի որակի բարելավման ու հոսակորուստների նվազեցման նպատակով իրականացվել են ստորն ներկայացված աշխատանքները.

● Նստվածքով պարզարաններում մշակվող ջրի վերընթաց հոսքի սահմանային արագությունները պահպանելու նպատակով, նստվածքախտացուցիչ մասերում, ստիպողական հոսքի $d=200$ մմ տրամագծի մետաղական խողովակաշարերը բերվել են մեկ մակարդակի:



● Կախված նստվածքով պարզարաններում բանվորական խցերի $D=200$ մմ տրամագծի ջրաբաշխիչ մետաղական խողովակաշարերը կարգաբերվել են այնպես, որ չմշակված ջուրը բոլոր գոտիներում բաշխվի հավասարաչափ:

● Պարզարանների աշխատանքը կառավարող թվով 3 անսարք վիճակում գտնվող $D=200$ մմ տրամագծի տեխնոլոգիական փականները փոխարինվել են նորերով:

● Մասամբ վերանորոգվել է կոռոզիայի ենթարկված մետաղական մրրկային խառնարանը և անհրաժեշտ հատվածում տեղադրվել է $d=150$ մմ տրամագծի թողարկ փական:

● Ռեազենտ տնտեսության սենյակում տեղադրվել են ջրի կոագուլավորման համար անհրաժեշտ սարքավորումներ և պոմպեր:





3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 35661 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 10698 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 8470 զանգ՝ (79.2%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2228 զանգ (20.8 %):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 24963 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 17928 զանգ (71.8%), իսկ մարզերինը՝ 7035 զանգ (28.2%):

● 2021թ. ապրիլի համեմատ՝ 2022թ. ապրիլի ամսին 9,86%-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը նվազել է 20,68 %-ով:

● 2021թ. ապրիլի համեմատ՝ 2022թ. ապրիլի ամսին 66%-ով ավելացել է հայտարարությունների լուսմը ավտոմատ ծառայության միջոցով, 18%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, իսկ 11 %-ով՝ նվազել է 5 բուկեթից ավել զանգերի քանակը:



185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր

	Ստորաբաժանում	2021 ապրիլ	2022 ապրիլ	
Առևտրային	Ընդամենը	11868	10698	-9.86%
	Երևան	9326	8470	-9.18%
	Մարզեր	2542	2228	-12.35%
Շահագործում	Շահագործում	31470	24963	-20.68%
	Հարավ	12765	9882	-22.59%
	Շենգավիթ	2599	1649	-36.55%
	Կենտրոն	3946	2441	-38.14%
	Հյուսիս/Ավան Լոր Լորք/	1274	1418	11.30%
	Էրեբունի	2274	1076	-52.68%
	Պոմպեր	701	777	10.84%
	Մարզեր	1971	2521	27.90%
	այդ թվում կոյուղու վթար	70	45	-35.71%
	այդ թվում դիտահորի խցանում	2749	2101	-23.57%
	Հյուսիս	18705	15081	-19.37%
	Արաբկիր	4654	2547	-45.27%
	Քանաքեռ-Զեյթուն	1918	1802	-6.05%
	Մաշտոց	3029	2848	-5.98%
	Շահումյան	2919	2094	-28.26%
	Պոմպեր	1367	1276	-6.66%
	Մարզեր	4818	4514	-6.31%
	այդ թվում կոյուղու վթար	135	111	-17.78%
	այդ թվում դիտահորի խցանում	4254	5002	17.58%
	Ընդամենը	43338	35661	-17.71%

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Ապրիլը Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ համար սկսվեց մարտի վերջին օրերին տեղացած առատ ձյան հետևանքների վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների լուսաբանմամբ:

Խոսքը Արագածոտնի մարզի 3 գյուղերի այդ թվում Նորաշենի ջրամատակարարման խաթարման մասին է: Որպես խնդրի ժամանակավոր լուծում՝ սպառողներին Վեոլիա Թիմը ջուր էր հասցնում ավտոգիստերներով: Շուրջ մեկ շաբաթ Արագածի լեռնային աղբյուրներում տևած աշխատանքներից հետո «Արթիկ» շահագործման տեղամասին հաջողվեց գտնել ջրատարի վթարի վայրը, գողել իրարից պոկված խողովակները և վերականգնել թվով 3 գյուղերի ջրամատակարարումը:

Ասենք, ապրիլն էլ անմասն չճաց արտակարգ պատահարներից: Մասնավորապես, ամսի 13-ին ուժեղ քամին զգալի փասաներ պատճառեց համակարգին: Դրա հետևանքների վերացումը լուսաբանվեց ՀԿԲ-ի կողմից: «Կաթնաղբյուր» ջրաղբյուրի սանիտարական գոտում կողաշրջվել էին հաստաբուն ծառեր՝ փասսելով էլեկտրական հաղորդալարերը: Իսկ «Մաղմոսավան» ջրաղբյուրի քլորակայան տանող ճանապարհը քարաթափման հետևանքով ամբողջությամբ փակվել էր: Ընդհանուր առմամբ մեկ օրվա ընթացքում ինժեներական կառույցների աշխատակազմերին հաջողվեց վերականգնել դրանց կանոնավոր աշխատանքը:



Սակայն ընդհանուր առմամբ հաշվետու ամիսը ակտիվ և կայուն աշխատանքի ժամանակաշրջան էր Վեոլիա Թիմի համար: Ամենակարևորը՝ մեկնարկեց ՊԿԱՕ 2022-ը: Դրա շրջանակներում սկսվեց Էրեբունի Խաղաղ Դռնի փողոցի ջրամատակարարման ցանցի արդիականացման 155 մլն դրամ արժեքով ծրագիրը:



Իրենց հերթին շահագործման և տեխնիկական տնօրինությունների ծառայությունները շարունակում էին սպասարկել, ինչպես նաև հնարավորության սահմաններում զարգացնել համակարգը, լուծել առաջացող ու նախկինից ժառանգած խնդիրները: Այսպես՝

Վեոլիա Ջուր ընկերության «Էջմիածին» շահագործման տեղամասի մասնագետները Էջմիածնում տարիներ շարունակ չգործող 2 ՕԿՋ-ների մուտքագծեր հանեցին շահագործումից և կանխեցին ջրի կորուստը, Կոտայքի մարզի Արգել գյուղի մոտ բացվեց Չարենցավան-Երևան 800 մմ-ոց կոյուղու կոլեկտորի խցանումը,

«Մուխուրթուրյան-Աշոտավան-Հացավան» ջրատարի վրա վերացվեց 3 վթար ու ապահովվեց տարածաշրջանի բնակավայրերի կայուն ջրամատակարարումը,

Նոր ակունքի շահագործման շնորհիվ վայրկյանում 7-8 լիտրով ավելացավ «Արգական-Երևան» ջրատարով մայրաքաղաք հոսող ջրաքանակը,


Վերակառուցվեց «Ագարակ» պոմպակայանի սնման համակարգը, որի

շնորհիվ կայունացավ դեպի Արագածոտնի մարզի գյուղեր և Էջմիածին ջրի մատակարարումը, Հերթական «խելացի» ինվերտորային բակային պոմպը տեղադրվեց Երևանի Մեբաստիա 24 հասցեում, ապահովելով 4 բարձրահարկերի ջրամատակարարումը,

«Գառնի-Երևան» ջրատարից մինչև Արարատի մարզի Ջրաշեն և Դիտակ գյուղեր կառուցվեց 900 գծամետր ջրագիծ, լուծելով դրանց ջրի խնդիրը,

«Մխիթար Մեբաստացի» կրթահամալիրի տարածքում կառուցվեց 150 գծամետր խոշոր կոյուղագիծ և լուծվեց կեղտաջրերի հեռացման խնդիրը:

Միաժամանակ, անդրադարձ է կատարվել ներհամակարգային խնդիրներին, համատեղ աշխատանքներին, միջոցառումներին, որոնք նպաստում են Վեոլիա Թիմի ձևավորմանն ու ամրապնդմանը: Այսպես, «Կաթնաղբյուր» ջրաղբյուրի սանիտարական գոտում, որը զբաղեցնում է ավելի քան տասը հեկտար անտառապատ տարածք,



ինչպես ամեն գարնան, աշխատակազմը հավաքել է անձրևից ու քամուց կտորված կամ կայծակահար ծառերի ճյուղերը, էտել ծառերը: Այստեղ նաև տնկվել է շուրջ 150 պտղատու ծառ, որն ունի կարևոր բնապահպանական նշանակություն:

«Մեդրի» շահագործման տեղամասի աշխատակիցներն իրենց հերթին Ագարակի տեղամասի տարածքում շաբաթօրյակ են կազմակերպել: Հավաքել և մաքրել են ձմռան ընթացքում կուտակված աղբն ու կոտրատված ճյուղերը, ներկել են վարչական շենքի դռները, պատուհաններն ու ճաղավանդակները, բարեկարգել տեխնիկական բակն ու շրջակայքը:

Հաշվետու ամսին չեն մոռացվել համապետական տոները, հիշարժան իրադարձությունները և Վեոլիա Թիմի ձեռքբերումները:

Այսպես, հավուր պատշաճի հիշվել է Հայոց Ցեղասպանությունից 107 տարեկիցը, ընկերության բարեմաղթանքներն են հղվել սպառողներին՝ Սուրբ Զատիկի տոնի առթիվ, տնօրինությունը շնորհավորել է կանանց՝ Մայրության և Գեղեցկության տոնի առթիվ: Օգտվելով առիթից, որ ապրիլին լրացել է Վեոլիայի «Հեռախոսային կենտրոնի» 15 ամյակը, ՀԿԲ-ն հնարավորինս լիարժեք հանրությանն է ներկայացրել այս ծառայության գործառնությունները, կառուցվածքն ու գործունեության ընթացակարգը: Նշվել է, որ 1-85-ը ընկերության հանրության հետ կապերի կարևորագույն օղակներից մեկն է, որի զարգացումը մշտապես ժամում է տնօրինության ուշադրության ներքո:

Իսկ որպես ընկերության առաջընթացի վկայություն՝ հրապարակվել է ՀՀ ՊԵԿ-ի հայտարարությունը, ըստ որի 2022 թ.-ի հունվար-մարտ ամիսների տվյալներով «Վեոլիա Ջուր» ընկերությունը ՀՀ 30-րդ խոշոր հարկատուն է, հարկերի և վճարների տեսքով պետական բյուջե վճարված ավելի քան 1,4 մլրդ դրամ գումարով:

Հաշվետու ամսին իրականացվել է 22 հրապարակում, ընդգրկելով ընկերության գործունեության գրեթե բոլոր ուղղությունները, չհաշված խոշոր ջրանջատումների, մրցույթների ու թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները:

Հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, facebook.com/veolia.armenia-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և youtube Veolia Jur էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Բաժինը, ղեկավարվելով ընկերության գլխավոր տնօրենի 24 հունվարի 2022թ-ի N 02 Լ հրամանի և հրամանով հաստատված կարգի պահանջներով, Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման (ԲՌԿ) ստանդարտի պահանջներով՝ հաշվետու ամսում մշակեց «Երթևեկությունն աշխատատեղում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Ավտոմեքենաների անվտանգ շահագործում» դասընթացների պրեզենտացիաների նյութերը:

5.2. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● ՈԱԱ Բաժինը (Որակավորման հանձնաժողով), հիմք ընդունելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02 Լ հրամանի պահանջները, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ հոդվածի 3-րդ մասի և 254-րդ հոդվածի, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ հաստատված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջներով և ելնելով Վեոլիա Գրուպի «Վտանգավոր նյութերի, քիմիկատների տեղափոխում, պահեստավորում գործածում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջներից, Ընկերության գլխավոր տնօրենի 2022 թվականի մայիսի 6-ի N 2619 Ա հրամանի հիման վրա Ընկերության քլորակայանների ինժեներատեխնիկական անձնակազմի՝ քլորի օպերատորների և պատասխանատուների թվով 100 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց 3 մոդուլից բաղկացած ստորև ներկայացվող մասնագիտական որակավորման առկա դասընթացներ/գիտելիքների ստուգում՝

- Մոդուլ 1՝ «Քլորակայանի օպերատորի և քլորակայանի շահագործման պատասխանատու անձի որակավորման» առկա դասընթաց/գիտելիքների ստուգում,
- Մոդուլ 2՝ Վեոլիա Գրուպի «Վտանգավոր նյութերի, քիմիկատների տեղափոխում, պահեստավորում գործածում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջները դասընթաց:
- Մոդուլ 3՝ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» դասընթաց:




● Բաժինը (Որակավորման հանձնաժողով, ղեկավարվելով Ընկերության գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի 02 Լ հրամանի պահանջներով, ինչպես նաև «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 88-րդ և 254-րդ հոդվածի, Վեոլիա Գրուպի «Ամբարձման աշխատանքներ» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջներով, Ընկերության գլխավոր տնօրենի 25-րդ մայիսի 2022 թվականի N 2968 Ա հրամանի հիման վրա, Ընկերության թվով 7 ամբարձիչ ավտոմեքենա շահագործող աշխատողների (վարորդների) համար կազմակերպեց և իրականացրեց «1000 կգ և ավել բեռնաբարձությամբ ամբարձիչ ավտոմեքենայի անվտանգ շահագործման պահանջները» վերաորակավորման ստորև ներկայացվող երեք մոդուլից բաղկացած առկա դասընթաց և գիտելիքների ստուգում:

- Մոդուլ 1 «Ամփարձման աշխատանքներ» Վեոլիա Գրուպի Բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի պահանջներ դասընթաց,
- Մոդուլ 2 «1000 կգ և ավել բեռնափարձության ամփարձիչ ավտոմեքենայի անվտանգ շահագործման պահանջներ» վերաորակավորման դասընթաց և գիտելիքների ստուգում:
- Մոդուլ 3 «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» դասընթաց:




Բաժինը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 28/09/2005 թվականի 2388-Ն որոշմամբ հաստատված «Գազաբալոնային համակարգով կահավորված ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգի» պահանջներով, «Պրեմիում գազ» ՍՊԸ-ի հետ համատեղ կազմակերպեց և իրականացրեց Ընկերության գազաբալոնային համակարգով կահավորված ավտոտրանսպորտային միջոցներ շահագործող թվով 8 աշխատակցի համար հեղուկ և սեղմված բնական գազով շահագործվող մեքենաների վարորդների հրահանգավորում և վկայականների տրամադրում:



5.3. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայքեր Ընկերության թվով 14 քլորակայանում, 10 պոմպակայանում, 1 ՋՄԿ-ում, 1 ԿՄԿ-ում, 3 ՕԿՁ-ում և 4 կաթսայատանը: Ստուգայքերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսուճաստիպվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 11 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով զծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:



5.4. ԱՎՕ-ՆԵՐԻ և ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Բաժինը, հաշվետու ամսում, համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի, թվով 1 ամբարձիչ ավտոմեքենա, որպես արտադրական վտանգավոր օբյեկտ, գրանցեց Արտակարգ Իրավիճակների Նախարարության ԱՎՕ-ների ռեեստրում և ստացավ ԱՎՕ վկայական:

● Հաշվետու ամսում, համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի, «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ փորձագետների կողմից փորձաքննության ենթարեց Ընկերության ԱՎՕ հանդիսացող թվով 25 արտադրական վտանգավոր օբյեկտ (4 կաթսայատուն, 2 քլորակայան, 1 ամբարձիչ ավտոմեքենա, 18 ամբարձիչ սարքավորում), որից հետո տրվեց դրական եզրակացություններ:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



6.1. Համակարգչային ցանց

Ապրիլ ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- SS վարչությունը դիմավորել է կիբեռ անվտանգության խմբի մասնակիցներին՝ մեկնարկել են աշխատանքներ արդյունաբերական ոլորտի կիբեռ անվտանգության արդիականացման համար:
- Ուսումնասիրվել են բոլոր հնարավոր ռիսկերը տվյալ ոլորտում՝ Գրուպի կողմից նոր սարքավորումներ ձեռք բերելու ուղղությամբ:
- Գրուպի կողմից որոշվել է արդյունաբերական կիբեռ անվտանգության ոլորտը տարանջատել SS անվտանգության ոլորտից: Դրա պատճառով արդյունաբերական կիբեռ անվտանգության ամբողջ համակարգը տարանջատվել և իզոլացվել է SS համակարգից:
- Մի շարք աշխատանքներ են կատարվել անլար կապուղիների փոխարինման ուղղությամբ, ինչպես նաև համակարգն իզոլացվել է համացանցից:
- Գրուպի կողմից որոշում է կայացվել «Kaspersky» հակավիրուսային ծրագրից հրաժարվելու քաղաքականությունը: Հետևաբար մի շարք նախապատրաստական աշխատանքներ են կատարվել «Kaspersky» հակավիրուսային ծրագիրը համակարգից հեռացնելու նպատակով:

6.2. Ինտերակտիվ համակարգ

● Ինտերակտիվ համակարգում ավելացվել է նոր հնարավորություն՝ ԱՏ տեղամասերի համար տեսուչների տարածքային բաշխվածությունն ինքնուրույն իրականացնել, ինչպես տարածքային գոտիով, այնպես էլ կոնկրետ բաժանորդի, որի արդյունքում ունենում ենք տեսուչների բաշխվածության հստակ ձևավորված պատմություն:

● Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է ապրիլ ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	5	6.8	1.2
Էրեբունի	18	8.9	1.7
Շենգավիթ	5	1.4	0.3
Կենտրոն	6	4.0	0.8
Արաբկիր	2	1.0	0.2
Մաշտոց	47	12.0	2.1
Ճահողյան	7	3.1	0.5
Եղվարդ	5	2.8	0.5
Քանաքեռ-Զեյթուն	2	0.5	0.1
ԱԿԲ	62	45.7	8.8
Լոռի	1	0.5	0.1
Շիրակ	6	3.2	0.6
Արթիկ	1	0.5	0.1
Արարատ	19	3.4	0.7
Աբովյան	16	8.6	1.5
Հրազդան	16	3.0	0.6
Ալավերդի	2	1.0	0.2
Աշոցք	2	1.0	0.2
Արտաշատ	14	1.9	0.4
Գավառ	6	2.3	0.4
Էջմիածին	4	2.1	0.4
Իջևան	22	2.8	0.5
Մասիս	1	0.3	0.1
Նոյեմբերյան	1	0.5	0.1
Արմավիր	6	3.7	0.7
Ձերմուկ	2	0.5	0.1
Վայք	3	1.0	0.2
Աշտարակ	7	1.5	0.3
Զարենցավան	1	0.5	0.1
Սիսիան	4	2.1	0.4
Սպիտակ	24	6.0	1.0
Տաշիր	1	0.3	0.1
Ընդամենը	318	133.0	24.8

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ). Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է ապրիլ ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	13	4.48	21	4.15
Էրեբունի	21	9.30	73	0.52
Շենգավիթ	28	18.23	124	4.61
Կենտրոն	16	7.53	27	0.17
Արաբկիր	4	2.58	70	0.56
Մաշտոց	16	29.78	79	1.45
Շահումյան	26	22.35	77	0.64
Քանաքեռ-Զեյթուն	14	4.23	114	17.46
Լոռի	10	1.18	22	0.09
Շիրակ	24	5.54	68	0.32
Արթիկ	20	8.70	23	0.20
Արարատ		-	15	0.04
Աբովյան	1	0.18	12	6.31
Հրազդան	4	0.70	20	0.14
Ալավերդի	5	2.14	4	0.30
Աշոցք		-	7	0.07
Արտաշատ	3	1.36	30	0.16
Գավառ	2	1.02	27	0.16
Գորիս	5	1.93	3	0.01
Դիլիջան	2	0.99	10	0.05
Եղեգնաձոր	1	0.26	5	0.03
Էջմիածին	3	1.56	5	3.61
Իջևան	6	0.71	9	0.10
Կապան	4	2.32	3	0.04
Ճամբարակ		-	2	0.00
Մասիս	16	7.79	48	0.50
Մարտունի		-	13	0.07
Մեղրի		-	1	0.01
Նոյեմբերյան		-	1	0.01
Արմավիր	7	3.09	28	4.45
Ջերմուկ	3	0.77	10	0.06
Սևան		-	6	0.03
Վայք		-	18	0.27
Վարդենիս		-	2	0.01
Աշտարակ	6	1.39	20	0.06
Զարենցավան	2	0.72	19	0.18
Սիսիան	5	1.80	7	0.11
Սպիտակ	1	0.15	9	0.09
Ստեփանավան	2	0.52	6	1.04
Տաշիր	2	0.77	1	0.00
Ընդամենը	272	144.09	1039	48.08



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am